

Հայաստանի Հանրապետություն  
Republic of Armenia

**ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ**

**NATIONAL PROGRAMME  
ON HIV/AIDS PREVENTION  
IN THE REPUBLIC OF ARMENIA**

**2017-2021**

ԵՐԵՎԱՆ 2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |           |
|--|-----------|
| <b>Հայաստանի Հանրապետությունում 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիր .....</b>                                | <b>5</b>  |
| Հապավումներ.....   | 5         |
| I. Հասկացություններ.....   | 7         |
| II. Ներածություն.....  | 10        |
| III. 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի նպատակը.....  | 24        |
| IV. 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի խնդիրները.....   | 25        |
| V. 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի հիմնական ուղղությունները...   | 26        |
| VI. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում.....  | 27        |
| VII. Բուժում, խնամք և աջակցություն.....  | 31        |
| VIII. Մոնիտորինգ եվ գնահատում .....  | 33        |
| <b>Հայաստանի Հանրապետությունում 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկ .....</b> | <b>35</b> |
| <b>Հայաստանի Հանրապետությունում 2017-2021 թվականներին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի մոնիտորինգի և գնահատման պլան .....</b>  | <b>52</b> |
| I. Մոնիտորինգի և գնահատման պլանի ընդհանուր նկարագիրը .....   | 53        |
| II. Մոնիտորինգի և գնահատման պլանի գործնական իրագործման հիմնահարցեր .....   | 96        |



## Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ  
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց  
15 հունիսի 2017 թվականի N 25

### 34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ, ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հավանություն տալ՝
  - 1) Հայաստանի Հանրապետությունում 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրին՝ համաձայն N 1 հավելվածի.
  - 2) Հայաստանի Հանրապետությունում 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկին՝ համաձայն N2 հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ ապահովել Հայաստանի Հանրապետությունում 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի մոնիթորինգի և գնահատման գործընթացը:
3. Համակատարող գերատեսչությունների ղեկավարներին՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել իրենց կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվություններ՝ մինչև հաջորդող տարվա փետրվարի 10-ը՝ դրանք Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովին տրամադրելու համար:
4. Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովին՝ վերլուծել, ամփոփել Հայաստանի Հանրապետությունում 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական

նպատակային ծրագրի միջոցառումների կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունները և դրանց վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն՝ մինչև հաջորդող տարվա մարտի 10-ը:

5. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ Հայաստանի Հանրապետությունում 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի միջոցառումների ընթացիկ կատարման վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ՝ մինչև հաջորդող տարվա մարտի 20-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. հունիսի 21

Երևան



**Հավելված N 1**

ՀՀ կառավարության 2017 թ.  
հունիսի-15-ի նիստի N 25  
արձանագրային որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

|                   |   |
|-------------------|---|
| <b>ԱՀԿ</b>        | Առողջապահության համաշխարհային կազմակերպություն  |
| <b>ԱՆ</b>         | առողջապահության նախարարություն  |
| <b>ԱՊՀ</b>        | անկախ պետությունների համագործակցություն   |
| <b>ԹՆՕ</b>        | թմրամիջոցների ներարկային օգտագործող   |
| <b>ԿՍԿ</b>        | կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կին   |
| <b>ՀՀ</b>         | Հայաստանի Հանրապետություն   |
| <b>ՀՌՎ</b>        | հակառետրովիրուսային   |
| <b>ՁԻԱՀ</b>       | ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ   |
| <b>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</b> | «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն                |
| <b>ՄԱԿ</b>        | Միավորված ազգերի կազմակերպություն   |
| <b>ՄԻԱՎ</b>       | մարդու իմունային անբավարարության վիրուս   |
| <b>ՄՀՀ</b>        | ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողով |
| <b>ՊՇՌ</b>        | պոլիմերազային շղթայական ռեակցիա   |
| <b>ՎԾ</b>         | վիրուսային ծանրաբեռնվածություն  |
| <b>ՏԲ</b>         | տուբերկուլոզ  |
| <b>SUS</b>        | տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդ   |
| <b>ՔԿՀ</b>        | քրեակատարողական հիմնարկ   |

## I. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն ծրագրում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝
  - 1) **Առավել վտանգի ենթարկվող խմբեր** - թմրամիջոցների ներարկային օգտագործողներ, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք, տղամարդկանց հետ սեռական կապեր ունեցող տղամարդիկ, քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ, միգրանտներ:
  - 2) **Գնահատում** - ծրագրի/միջամտությունների արժեքն ու կարևորությունը բնութագրող արդյունքների և ծրագրի/միջամտության վերաբերյալ ճշգրիտ, գիտականորեն հիմնավորված տեղեկատվության հավաքագրում: Գնահատման ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս ստանալու հավաստի տեղեկատվություն ծրագրերը/միջամտությունները բարելավելու և ռեսուրսների հետագա բաշխման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:
  - 3) **Գործնական հետազոտություններ** - ծառայությունների տրամադրումը բարելավելու նպատակով դրանց մատչելիության, հասանելիության, որակի և/կամ կայունության գնահատում:
  - 4) **Դիսկորդանտ զույգ** - զույգ, որում զուգընկերներից միայն մեկն է վարակված ՄԻԱՎ-ով:
  - 5) **Թիրախ** - ծրագրի/միջամտության իրականացման չափելի նպատակ, սահմանված ժամանակահատվածում ցուցանիշի ցանկալի արժեք:
  - 6) **Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ** - զարգանում է ՄԻԱՎ-ով վարակված մարդկանց մոտ, համարվում է ՄԻԱՎ վարակ հիվանդության վերջնային փուլը, բնորոշվում է իմունային համակարգի գործունեության խաթարմամբ, որի հետևանքով օրգանիզմը դառնում է անպաշտպան զանազան վարակիչ և ուռուցքային հիվանդությունների նկատմամբ:
  - 7) **Մարդու իմունային անբավարարության վիրուս** - վիրուս, որն առաջացնում է ՄԻԱՎ վարակ հիվանդությունը և հանգեցնում ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի զարգացման:
  - 8) **ՄԻԱՎ վարակ** - երկարատև ընթացքով քրոնիկ վարակիչ հիվանդություն, որի հարուցիչը ՄԻԱՎ-ն է:

- 9) **Միգրանտ** - օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիներ, օտարերկրյա պետություններից վերադարձած ՀՀ քաղաքացիներ (աշխատանքային միգրանտներ), ՀՀ-ից մեկնելու մտադրություն ունեցող ՀՀ քաղաքացիներ (պոտենցիալ միգրանտներ), ՀՀ-ում բնակվող օտարերկրյա քաղաքացիներ (ՀՀ-ում ապաստան հայցող և փախստականի կարգավիճակ ստացած օտարերկրացիներ, ՀՀ-ում կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիներ):
- 10) **Հաշվետվություն/զեկույց** - փաստաթուղթ, որը պարբերաբար ներկայացնում է մոնիտորինգի և գնահատման խումբը՝ տվյալների աղբյուրներն ստանալուց և վերլուծելուց հետո:
- 11) **Հիվանդացություն** - որոշակի ժամանակահատվածում բնակչության որոշակի խմբերի շրջանում արձանագրված հիվանդության նոր դեպքերի թիվը:
- 12) **ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ընթացիկ համաճարակաբանական հսկողություն (հետազոտություններ)** - ՄԻԱՎ վարակի համատեքստում առողջությանն առնչվող երևույթի/հիվանդության շարժի համակարգված, մշտական, բազմատեսակետ դիտարկումն ու գնահատումն է՝ որոշելով երևույթի/հիվանդության տարածվածության չափերը և մշակելով կանխարգելիչ և համաճարակաբանական հսկողության միջոցառումներ՝ բազմալորտ և բազմասեկտորային համագործակցությամբ: Այն կիրառվում է հանրային առողջապահական արձագանքման՝ առողջապահության համակարգում միջոցառումների և ծրագրերի մշակման, ներդրման և գնահատման համար՝ հիվանդացությունը և մահացությունը նվազեցնելու, ինչպես նաև՝ առողջությունը բարելավելու նպատակով: Համաճարակաբանական հսկողության տվյալներն օգտագործվում են հանրային առողջապահական համակարգում միջոցառումների անհրաժեշտության որոշման և իրականացված ծրագրերի արդյունավետությունը գնահատելու նպատակով:
- 13) **Մոնիտորինգ** - ծրագրի ընթացիկ դիտարկում՝ ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն (ներդրումներ, արդյունքների, գործընթացի ու ազդեցության ցուցանիշներ) ստանալու համար: Մոնիտորինգն ընթացիկ միջոցառումների և/կամ գործընթացների շարունակական, ընթացիկ, ամենօրյա և կանոնավոր գնահատումն է հիմնական շահագրգիռ կողմերին ընթացիկ մի-



ջամտությունների առաջընթացի առկայության կամ բացակայության վերաբերյալ տվյալներ տրամադրելու նպատակով:

- 14) **Որակի ապահովում** - սահմանված չափանիշներին միջամտությունների համապատասխանեցմանն ու բարելավմանն ուղղված պլանավորված և սիստեմատիկ գործընթացներ:
- 15) **Տարածվածություն** - տվյալ պահին կոնկրետ հիվանդությամբ ապրող կամ հատուկ վիճակ ունեցող մարդկանց ընդհանուր թիվ:
- 16) **Ցուցանիշ** - քանակական կամ որակական փոփոխական, որը հնարավորություն է տալիս հիմնավոր և վստահելի ձևով գնահատելու ձեռքբերումներն ու միջամտությունների իրականացումը կամ ցույց տալու դրանց հետևանքով առաջացած փոփոխությունները:
- 17) **Ուսումնասիրություն** - հանրային առողջապահության բարելավմանն ուղղված հետազոտություն անհրաժեշտ նոր տեղեկություններ ստանալու կամ առկա տեղեկություններն ընդհանրացնելու միջոցով: Ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզելու հսկվող պայմաններում, կոնկրետ ժամանակահատվածում տարբեր փոփոխականների փոխազդեցությունը:
- 18) **«90-90-90» թիրախներ** - սահմանված են 2016թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով բարձր մակարդակի հանդիպման ժամանակ ընդունված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում քաղաքական հռչակագրով և նշանակում են, որ մինչև 2020թ. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 90%-ը պետք է իմանա իր կարգավիճակի մասին, ստանա ախտորոշում, նրանց 90%-ին պետք է տրամադրվի ՀՌՎ բուժում, ՀՌՎ բուժում ստացողների 90%-ի շրջանում պետք է արձանագրվի վիրուսային ծանրաբեռնվածության չհայտնաբերվող մակարդակ:

## II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ) պայմանավորված հիվանդության (ՄԻԱՎ վարակ) և ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) դեպքերի արձանագրումը սկսվել է 1988 թվականից: Մինչև 2016թ. սեպտեմբերի 30-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 2451 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, ներառյալ երեխաների շրջանում արձանագրված ՄԻԱՎ վարակի 44 դեպք:
3. ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի գրանցված բոլոր դեպքերի կեսից ավելին արձանագրվել է վերջին հինգ տարվա ընթացքում: ՄԻԱՎ վարակի դեպքերի թվի աճը պայմանավորված է լաբորատոր ախտորոշման հնարավորությունների ընդլայնմամբ և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների հասանելիության մեծացմամբ, նաև ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության համակարգի գործունեությամբ: Արդյունքում աճել է հետազոտությունների թիվը, բարելավվել է ՄԻԱՎ վարակի հայտնաբերումը, և բարձրացել է համաճարակաբանական հսկողության համակարգի արդյունավետությունը: Արձանագրված ՁԻԱՀ-ի դեպքերի թվի աճը պայմանավորված է ՁԻԱՀ-ի և ՁԻԱՀ ինդիկատորային հիվանդությունների լաբորատոր ախտորոշման հնարավորությունների ընդլայնմամբ: Հիվանդության ախտորոշման բարելավումը պայմանավորված է նաև բուժաշխատողների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ գիտելիքների մակարդակի աճով՝ շնորհիվ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՁԻԱՀ-ի ԿՀԿ) կողմից անցկացված դասընթացների, սեմինար-վարժանքների: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի արձանագրվող դեպքերի թիվն աճել է նաև այն պատճառով, որ վերջին տարիներին ավելացել է արդեն իսկ ՄԻԱՎ վարակ ախտորոշումով և հիվանդության կլինիկական ախտանշաններով ՀՀ քաղաքացիների հետևյալ անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրներից (հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից, ուր ուղղված են ՀՀ-ից հիմնական միգրացիոն հոսքերը) դեպի Հայաստան:
4. ՄԻԱՎ-ով վարակվածների 52%-ը 25-39 տարիքային խմբում է, այսինքն՝ ակտիվ վերարտադրողական հասակում:

5. ՄԻԱՎ վարակ ունեցողների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 1694 մարդ, որը կազմում է դեպքերի ընդհանուր թվի 69%-ը, իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի 757 դեպք, ինչը կազմում է դեպքերի ընդհանուր թվի 31%-ը:
6. ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են հետերոսեքսուալ ճանապարհը (66%) և թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով վարակումը (25%): Սրանցից բացի՝ արձանագրվել են հոմոսեքսուալ ճանապարհով (2,8%), մորից երեխային (1,6%) և արյան միջոցով (0,2%) ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր: Արձանագրված դեպքերի 4,4%-ի փոխանցման ուղին անհայտ է:
7. Հետերոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ-ի փոխանցումը վարակման հիմնական ուղին է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց շրջանում: ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի վերլուծությունը՝ ըստ փոխանցման ուղիների և սեռի, ցույց է տալիս, որ տղամարդկանց կեսից ավելին (53,7%) վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, իսկ 36,4%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Գրեթե բոլոր կանայք վարակվել են սեռական ճանապարհով (97,2%): ՄԻԱՎ վարակով գրանցված 44 երեխաներից 39-ը վարակվել են մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման ճանապարհով, 3-ը՝ արյան միջոցով, իսկ 2-ի վարակման ուղին անհայտ է:
8. Սկսած 2004թ.՝ նկատվում է փոխանցման հիմնական ուղիների փոփոխություն: Թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով վարակման դեպքերի մասնաբաժինը 2004-2016թթ. ընկած ժամանակահատվածում նվազել է մոտ 5 անգամ՝ հասնելով մոտ 14%-ի, իսկ հետերոսեքսուալ ճանապարհով վարակման դեպքերն աճել են 2,5 անգամ՝ հասնելով 77%-ի:
9. Հետերոսեքսուալ ճանապարհով վարակման դեպքերի աճի և թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով վարակման դեպքերի նվազման միտում դիտվում է թե՛ ՀՀ-ում, թե՛ արտերկրում վարակվածների շրջանում: Վերջին ութ տարվա ընթացքում արտերկրում վարակվածների շրջանում հետերոսեքսուալ ճանապարհով վարակման դեպքերի մասնաբաժինն աճել է ավելի քան 44%-ով, իսկ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով վարակման դեպքերինը՝ նվազել 50%-ով:

Վարակման հետերոսեքսուալ ուղին 2016թ. ինը ամսվա դրությամբ կազմել է մոտ 70%, իսկ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով վարակման ուղին՝ մոտ 22%: ՀՀ-ում վարակվածների շրջանում հետերոսեքսուալ ճանապարհով վարակման դեպքերն ավելացել են 2016թ. կազմելով 86%, իսկ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով վարակման դեպքերը նվազել են մինչև 2%:

10. Ընդհանուր առմամբ վերջին վեց տարվա ընթացքում արձանագրված դեպքերի մեծամասնությունը՝ 56%-ը, կազմում են արտերկրում վարակվածները, 11%-ը՝ նրանց զուգընկերները: Այսպիսով, արձանագրված դեպքերի 67%-ը կապված է միգրացիայի հետ:
11. Սկսած 2004թ.՝ տարեցտարի նվազում է արձանագրվող դեպքերի ընդհանուր կազմում, այսպես կոչված, «դասական դիսկի խմբերի», այսինքն՝ թմրամիջոցների ներարկային օգտագործողների, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց և հոմոսեքսուալ հարաբերություններ ունեցող տղամարդկանց համամասնությունը: 2004-2016թթ. ընթացքում այն նվազել է մոտ 4 անգամ, և 2016թ. կազմել 18%: Մեծամասնությունը՝ 77%-ը, կազմում են միգրանտները և նրանց զուգընկերները, վերոնշյալ խմբերին պատկանողների զուգընկերները, ոչ անվտանգ սեռական վարքագիծ դրսևորողները:
12. ՄԻԱՎ վարակով պացիենտներից 1283-ի մոտ (կին՝ 327, երեխա՝ 24) ախտորոշվել է ՁԻԱՀ: Համաճարակի սկզբից գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 551 դեպք: Մահացածների թվում կան 95 կին և 8 երեխա:
13. ՄԻԱՎ վարակի դեպքեր արձանագրվել են հանրապետության բոլոր մարզերի և Երևանի բնակիչների շրջանում: ՄԻԱՎ վարակի դեպքերի առավելագույն թիվն արձանագրվել է մայրաքաղաքում՝ 786 դեպք, ինչը կազմում է բոլոր գրանցված դեպքերի մոտ 1/3-ը: ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի թվով երկրորդ տեղում Շիրակի մարզն է՝ 281 դեպք, ինչը կազմում է բոլոր գրանցված դեպքերի 11,5%-ը: ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով ցույց է տալիս, որ ամենաբարձր ցուցանիշը Շիրակում է՝ 114, որին հաջորդում են Լոռու (107,5), Գեղարքունիքի (79), Արմավիրի (77,5) մարզերը:

14. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում 2015թ. վերջի դրությամբ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմել է 3600:
15. 2013-2016թթ. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի շրջանակում իրականացվել են բազմաթիվ կանխարգելիչ ծրագրեր ՄԻԱՎ-ի նկատմամբ բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի, այդ թվում միգրանտների և նրանց զուգընկերների, քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) գտնվողների շրջանում, ինչպես նաև իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ երիտասարդության շրջանում:
16. ԹՆՕ-ների, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց (ԿՍԿ) տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդկանց (SUS) շրջանում իրականացվող վնասի նվազեցման և ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի շրջանակում նշված խմբերի ներկայացուցիչներին տրամադրվում են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն, տեղեկատվական-կրթական նյութեր և կանխարգելման միջոցներ, իրականացվում է «Հավասարը հավասարին» մեթոդով ուսուցում, ԹՆՕ-ներին տրամադրվում է փոխարինող բուժում:
17. ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում իրականացվող վնասի նվազեցման և ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի շրջանակներում տրամադրվում են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն, տեղեկատվական-կրթական նյութեր և կանխարգելման միջոցներ, նաև փոխարինող բուժում:
18. Հանրապետության 100 գյուղական և քաղաքային համայնքներում ներդրվել և իրականացվում են ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրեր բնակչության ամենախոցելի խմբում՝ միգրանտների, նաև նրանց ընտանիքի անդամների շրջանում, գործում են շարժական բժշկական խմբեր, որոնք տրամադրում են ՄԻԱՎ վարակին առնչվող բժշկական ծառայություններ համայնքային ամբուլատորիաներում և 2 շարժական բուժախտորոշիչ կլինիկաների բազայի վրա: ՄԻԱՎ վարակին առնչվող բժշկական ծառայությունները տրամադրվում են առողջապահական ծառայությունների համապարփակ փաթեթի

շրջանակում, որը ներառում է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվությունն ու հետազոտությունը, հետազոտություններ վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի, սիֆիլիսի վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում այցելուներն ուղեգրվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ՝ անցնելու հետազոտություններ այլ սեռավարակների վերաբերյալ), տուբերկուլոզի սկրինինգ ԱՀԿ-ի կողմից առաջարկված հարցաշարով:

19. Շարունակվել է հանրակրթական դպրոցների 8-9-րդ և 10-11-րդ դասարանների կրթական ծրագրում ներառված «Առողջ ապրելակերպ» դասընթացի դասավանդումը, որում կան առանձին բաժիններ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրների, սեռական հասունացման և վերարտադրողական առողջության, վնասակար սովորությունների վերաբերյալ:
20. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի իրականացման ընթացքում տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպվել և անցկացվել են մի շարք հանրային միջոցառումներ և տեղեկատվական քարոզարշավներ՝ ուղղված երիտասարդության և ընդհանուր բնակչության շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ իրազեկության բարձրացմանը, անվտանգ վարքագծի ձևավորմանը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության խրախուսմանն ու մասսայականացմանը: Պատրաստվել և ցուցադրվել են հեռուստա- և ռադիոհաղորդումներ, սոցիալական գովազդներ, տպագիր մամուլում հրապարակվել և էլեկտրոնային կայքերում տեղադրվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնախնդիրներին առնչվող հոդվածներ:
21. Իրականացվում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների դիսպանսերային հսկողություն, տրամադրվում են ՀՌՎ բուժում, խնամք և աջակցություն, կատարվում են ՁԻԱՀ-ի կլինիկական և լաբորատոր ախտորոշում, ՀՌՎ բուժման լաբորատոր մոնիտորինգ:
22. Իրականացվում են մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում և հետկոնտակտային կանխարգելում:
23. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտներին տրամադրվում են ինտեգրված բժշկական ծառայություններ՝ վերարտադրողական համակարգի հիվանդությունների, սեռավարակների, մաշկային հիվանդությունների վերաբերյալ հետա-

զոտություններ և ամբուլատոր բուժում, սեռական աններդաշնակության շտկում, խորհրդատվություն սեռական և վերարտադրողական առողջության հարցերով, տուբերկուլոզի ախտորոշում և կանխարգելիչ բուժում:

24. ՄԻԱՎ վարակով պացիենտների ուղեգրումը հիվանդանոցային բուժման, մանկաբարձագինեկոլոգիական, նարկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման, ՏԲ-ի բուժման, նեղ մասնագիտական բժշկական օգնության և սպասարկման համար իրականացվում է համապատասխան չափորոշիչներին համաձայն:
25. ՄԻԱՎ վարակով չպայմանավորված ախտաբանական վիճակների և հիվանդությունների հետ կապված, ինչպես նաև ՄԻԱՎ վարակով պայմանավորված ինտենսիվ և նեղ մասնագիտական ստացիոնար բուժման կարիք ունեցող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է ընդհանուր հիմունքներով բազմապրոֆիլ հիվանդանոցների համապատասխան բաժանմունքներում:
26. Տրամադրվում է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն, իրականացվում է ՄԻԱՎ վարակի վերջնական լաբորատոր ախտորոշում, ապահովվում է դոնորական արյան անվտանգությունը:
27. Տրամադրվում է տեխնիկական աջակցություն և մեթոդական օգնություն պետական, ոչ պետական, նաև միջազգային կազմակերպություններին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով:
28. Իրականացվում է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողություն (հետազոտություններ):
29. Իրականացվում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի մոնիտորինգ և գնահատում:
30. 2013-2015թթ. (մինչև 2015թ. հունիսը, երբ ավարտվեց Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի ֆինանսական աջակցությունը) շարունակվել է 2010թ. ՀՀ առողջապահության նախարարության (ԱՆ) Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտում ներդրված «ՄԻԱՎ վարակ» դասընթացը տարբեր մասնագիտության բժիշկների և միջին բուժանձնակազմի համար:

31. Համաձայն «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի՝ «ՀՀ բնակչության ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և մոնիտորինգի նպատակով ՀՀ-ում գործում է ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը:
32. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի իրականացման արդյունքում երկրում արձանագրվել են նշանակալի ձեռքբերումներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման գործում:
33. 2007թ. ի վեր կանխարգելիչ բուժում ստացած մայրերից ծնված 150 երեխաների շրջանում ՄԻԱՎ վարակի որևէ դեպք չի արձանագրվել: Հայաստանը հասել է մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացման վավերացման համար Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից սահմանված թիրախներին, ինչի հիման վրա երկիրը նախածեռնել էր մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացման վավերացման գործընթաց: ԱՀԿ-ի և ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի փորձագիտական խմբի առաքելության արդյունքում ԱՀԿ-ի վալիդացման գլոբալ կոմիտեի կողմից հաստատվել են այս ոլորտում երկրի ձեռքբերումները, և 2016թ. հունիսին Նյու Յորքում կայացած ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրներին նվիրված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակի հանդիպման շրջանակներում ԱՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառման ընթացքում Հայաստանին է հանձնվել մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացումը փաստող հավաստագիր: Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցումը վերացրած երկրի կարգավիճակը պահպանելու համար անհրաժեշտ է ԱՀԿ-ի Վալիդացման տարածաշրջանային թիմի և Վալիդացման գլոբալ խորհրդատվական կոմիտեի առաջարկություններին համապատասխան ընդլայնել իրականացվող միջոցառումները մի շարք ուղղություններով և բարելավել օրենսդրական դաշտը:
34. Վերահսկվում է ՄԻԱՎ-ի փոխանցման տեսանկյունից դոնորական արյան անվտանգությունը, ինչի արդյունքում, 2001թ. սկսած, հանրապետությունում չի արձանագրվել դոնորական արյան միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման որևէ դեպք: Անհրաժեշտ է շարունակել ՄԻԱՎ-ի վերաբերյալ դոնորական արյան սկրինինգը, հետազոտության կատարող լաբորատորիաներում ներդնել որակի ներքին հսկողության ընթացակարգ:



35. ՀՀ-ում արձանագրվել է համաճարակի առաջընթացի կասեցում: Եթե դեռևս 2010թ. ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը կազմում էր 10,7%, ապա ներկայումս ռիսկային վարքագիծ ունեցող խմբերից և ոչ մեկում ՄԻԱՎ-ի տարածվածությունը չի գերազանցում 5%-ը, իսկ հղիների շրջանում այն զգալիորեն ցածր է 1%-ից, ինչը վկայում է կանխարգելման միջոցառումների արդյունավետության մասին, որոնց արդյունքում արձանագրվել է ՁԻԱՀ-ի դեմ համաշխարհային պայքարի պատմության մեջ աննախադեպ ձեռքբերում՝ համաճարակի ոչ միայն կասեցում, այլև վերադարձ խտացման փուլից նախնականին: Սակայն հաշվի առնելով ներկայիս մարտահրավերները՝ անհրաժեշտ է գործադրել հետագա քայլեր համաճարակային գործընթացները վերահսկման տակ պահելու նպատակով, այլապես հետընթացն անխուսափելի կլինի: ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության ծածկույթի մեծացումը այն մեկնարկային մեխանիզմն է, որի գործադրումն ունի առանցքային նշանակություն ՄԻԱՎ վարակի բուժման և դրա արդյունավետության «90-90-90» հավակնոտ թիրախներին հասնելու համար: Ներկայումս ոլորտի կարևորագույն խնդիրներից են հիվանդության վաղ հայտնաբերումը, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կողմից իրենց կարգավիճակի մասին տեղեկացվածության մեծացումը և ախտորոշման բարելավումը: Վերջին տարիներին աճել են բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության ծավալները: Արդյունքում բարելավվել է ՄԻԱՎ վարակի հայտնաբերումը: Անհրաժեշտ է ընդլայնել բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրումը, խրախուսել ՀԿ-ների կողմից ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրումը՝ դարձնելով այն ավելի նպատակային, իրականացնել բնակչության շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության խթանմանն ու մասսայականացմանն ուղղված աշխատանքներ: Չափազանց կարևոր է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների որակի ապահովումը, ինչի համար անհրաժեշտ է իրականացնել դրա արտաքին և ներքին հսկողություն:
36. Բժշկական, պետական, ոչ պետական, նաև միջազգային կազմակերպություններին ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից պարբերաբար

տրամադրվում է տեխնիկական աջակցություն և մեթոդական օգնություն ՄԻԱՎ վարակի կանխարգելման, ախտորոշման, բուժման և խնամքի հարցերով, ինչի արդյունքում բարելավվել է տրամադրվող ծառայությունների որակը: Անհրաժեշտ է շարունակել տեխնիկական աջակցությունն ու մեթոդական օգնությունը՝ ապահովելու տրամադրվող ծառայությունների որակի հետագա բարելավումը, դրանց արդյունավետության և ծախսարդյունավետության բարձրացումը:

37. Միգրանտներին, նրանց զուգընկերներին գյուղական ու քաղաքային համայնքներում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի շարժական բժշկական խմբերի կողմից ամբուլատորիաներում և շարժական բուժախտորոշիչ կլինիկաների բազայի վրա տրամադրված ՄԻԱՎ վարակին առնչվող բժշկական ծառայությունների արդյունքում էապես մեծացել են նշված խմբին ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության հասանելիությունը և հետազոտության համար դիմելիությունը: Արդյունքում զգալիորեն աճել է հետազոտվողների թիվը, բարելավվել են ՄԻԱՎ վարակի հայտնաբերումն ու ախտորոշումը, ընդլայնվել է բուժման ծածկույթը, ինչն էլ իր հերթին ունի անմիջական կանխարգելիչ նշանակություն: Անհրաժեշտ է շարունակել միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացումը առողջապահական ծառայությունների համապարփակ փաթեթի տրամադրմամբ:
38. Երկրում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների համար հասանելի է ՀՌՎ բուժումը: ՀՀ-ում ՀՌՎ բուժում սկսել է տրամադրվել 2005 թվականից ընդամենը 25 պացիենտի: Ներկայում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում տրամադրվում է անվճար ՀՌՎ բուժում դրա համար ցուցում ունեցող և իրենց համաձայնությունը տված ՄԻԱՎ վարակ ունեցող բոլոր անձանց՝ տալով նրանց լիարժեք կյանքով ապրելու, աշխատելու և իրենց ընտանիքների մասին հոգալու հնարավորություն: 2016թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՌՎ բուժում ստանում էր ՄԻԱՎ վարակով 1113 պացիենտ: ՀՌՎ բուժումը ոչ միայն զգալիորեն նվազեցնում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների շրջանում մահացությունն ու հիվանդացությունը, բարելավում է կյանքի որակը, այլև ունի անմիջական կանխարգելիչ նշանակություն: Ուստի անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր՝

ապահովելու ՀՌՎ բուժման հասանելիությունը, կայունությունն ու անընդհատությունը:

39. ԱՀԿ-ի բուժման վերջին ուղեցույցների համաձայն՝ ՄԻԱՎ վարակ ախտորոշումից հետո բոլոր պացիենտներին պետք է առաջարկվի ՀՌՎ բուժում, ինչը ենթադրում է բուժում ստացողների թվի զգալի աճ: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով բոլոր պացիենտներին ՀՌՎ բուժման տրամադրումն ապահովելու համար անհրաժեշտ է վերանայել բուժման և խնամքի ազգային ուղեցույցները:
40. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից տրամադրված հետևյալ տակտային կանխարգելիչ բուժման արդյունքում մասնագիտական և ոչ մասնագիտական վարակման վտանգի ենթարկված հարյուրավոր անձանց շրջանում ՄԻԱՎ վարակի որևէ դեպք չի արձանագրվել: Անհրաժեշտ է շարունակել հետևյալ տակտային կանխարգելիչ բուժման տրամադրումը:
41. Երկրում ստեղծվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի, մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունների սերտորեն ինտեգրված համակարգ, որն ապահովում է հիվանդությունների վաղ ախտորոշում, բոլոր կարիք ունեցողներին որակյալ բժշկական օգնության և սպասարկման, առավել արդյունավետ բուժման և բժշկական այլ ծառայությունների տրամադրում:
42. ՄԻԱՎ վարակով պացիենտների շրջանում ՏԲ-ի վաղ հայտնաբերման նպատակով ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում ստեղծվել է ՏԲ-ի ախտորոշման ենթակառուցվածք, որտեղ իրականացվում են կրծքավանդակի ռենտգենաբանական հետազոտություն և խորխի հետազոտություն ՊՇՌ մեթոդով: Արդյունքում ՄԻԱՎ վարակով պացիենտների ավելի քան 95%-ը հետազոտվում է ՏԲ-ի վերաբերյալ, բարելավվել է նրանց շրջանում ՏԲ-ի ախտորոշումը և ՏԲ/ՄԻԱՎ համակցված վարակով պացիենտների վարումը: ՄԻԱՎ վարակով պացիենտներին տրամադրվում է ՏԲ-ի կանխարգելիչ բուժում: ՏԲ-ով պացիենտների ավելի քան 95%-ը հետազոտվում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ: Անհրաժեշտ է շարունակել ՄԻԱՎ վարակով պացիենտների շրջանում ՏԲ-ի վաղ հայտնաբերմանն ու նրանց շրջանում հիվանդության կանխարգելմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների իրականացումը ՏԲ-ով պացիենտների շրջանում:

43. Առողջապահության ոլորտի միջազգային փորձագետ, Գլոբալ հիմնադրամի խորհրդատու Տունդե Ազաբոյի աջակցությամբ իրականացվել է ՀՀ-ում ՄԻԱՎ վարակին առնչվող ծառայությունների միջին միավոր արժեքների գնահատում, 2015թ. և 2010թ. ընդհանուր արդյունավետության վերլուծություն (բարելավման կամ նվազման): Համաձայն գնահատման արդյունքների՝ վերջին տարիներին ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից մատուցվող գրեթե բոլոր ծառայությունների միավոր արժեքները նվազել են, իսկ ծավալները՝ էապես աճել: Մասնավորապես, ՀՌՎ բուժման ծավալների մասով՝ առաջին շարքի դեղերով բուժման ծավալները 2010թ. համեմատ 2015թ. աճել են 440%-ով, իսկ երկրորդ շարքինը՝ 1260%-ով: 2015-2016թթ. ընթացքում զգալի կերպով ընդլայնվել են նաև դիսպանսերային հսկողության շրջանակում տրամադրվող ծառայությունների տեսակները: Մասնավորապես, դիսպանսերային հսկողության շրջանակում սկսել են կատարվել տուբերկուլոզի հայտնաբերմանն ուղղված ռենտգենաբանական և խորխի ՊՇՌ մեթոդով հետազոտություններ, ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի դեղակայունության որոշում: Այսպիսով, կարելի է փաստել, որ վերջին հինգ տարվա ընթացքում զգալի կերպով աճել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտներին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունն ու ծախսարդյունավետությունը:
44. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման համար ՀՀ-ն ունի լավ կազմակերպված ազգային համակարգող մարմին՝ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն: Երկրում ստեղծվել է մոնիտորինգի և գնահատման ազգային միասնական համակարգ, որի շրջանակում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում գործող մոնիտորինգի և գնահատման ազգային խումբն իրականացնում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի մոնիտորինգ և գնահատում, այդ թվում պետական և ոչ պետական կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների ծրագրային և ֆինանսական մոնիտորինգ: Խումբը պարբերաբար պատրաստում և համապատասխան կազմակերպություններին (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագիր, Հիվանդությունների վերահսկման եվրոպական կենտրոն) է ներկայացնում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում տարբեր համաձայնագրերով, հոչակագրերով ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ զեկույցներ: Անհրաժեշտ

է շարունակել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրով սահմանված միջոցառումների մոնիտորինգն ու գնահատումը:

45. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում գործում է երկրի մասշտաբով համաճարակաբանական հսկողության արդյունավետ համակարգ՝ տվյալների կենտրոնացված հավաքագրմամբ և հաշվետվողականությամբ, որն ապահովում է տվյալների պատշաճ հավաքագրում ու վերլուծություն իրավիճակին համարժեք գործողություններ պլանավորելու և իրականացնելու համար: Բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում իրականացվում են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ: Անհրաժեշտ է շարունակել իրականացնել ՄԻԱՎ վարակի նկատմամբ ընթացիկ համաճարակաբանական հսկողություն (հետազոտություններ), ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող և խոցելի խմբերի շրջանում:
46. Ցանկացած ծրագրի հաջող իրականացման գրավականը համապատասխան ներուժի ձևավորումն ու զարգացումն է: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի շրջանակում բնակչության տարբեր խմբերի շրջանում կանխարգելիչ ծրագրեր իրականացնող պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, բուժաշխատողների համար կազմակերպվել և անցկացվել են սեմինար-վարժանքներ: Անհրաժեշտ է շարունակել ՄԻԱՎ վարակի կանխարգելման, բուժման և խնամքի հարցերով պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար սեմինար-վարժանքների անցկացումը:
47. 2010 թվականից ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտում ներդրվել և անցկացվել է «ՄԻԱՎ վարակ» դասընթացը, որի ուսումնական բազան ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն է: Մինչ դասընթացի ներդնումը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով բուժաշխատողների ներուժի զարգացումն իրականացվել է տարբեր մասնագետների համար կազմակերպվող սեմինար-վարժանքների միջոցով, որոնք ինտեգրված չեն եղել որևէ կրթական համակարգում և չեն ունեցել համակարգային մոտեցումներ: Դասընթացի ներդրմամբ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով բուժաշխատողների կատարելա-

գործումը դրվեց ինստիտուցիոնալ հիմքերի վրա: Դասընթացի շնորհիվ բարձրացել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ բուժաշխատողների գիտելիքների մակարդակը, ինչի արդյունքում մեծացել են նրանց նախաձեռնությամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության ծավալները և բարելավվել է ՄԻԱՎ վարակի հայտնաբերումը: Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի ֆինանսական աջակցության դադարեցման հետևանքով դասընթացի անցկացումն ընդհատվել է: Անհրաժեշտ է վերագործարկել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով բուժաշխատողների կատարելագործման «ՄԻԱՎ վարակ» դասընթացը և ապահովել դրա շարունակականությունը:

48. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման առաջին ծրագիրը մշակվել է 2002-2006թթ. համար: Դրան հաջորդել են 2007-2011թթ. և 2013-2016թթ. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրերը: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդմանն ուղղված միջոցառումների շարունակականության ապահովման նպատակով մշակվել է սույն ծրագիրը: Ծրագրի մշակման գործընթացում ընդգրկվել են պետական, հասարակական և միջազգային կազմակերպություններ: Ծրագիրը մշակվել է ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի աջակցությամբ: Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել 2014 և 2016թթ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ վարքագծային և կենսաբանական հետազոտությունների տվյալները, ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, SUS-ների խմբերի չափերի գնահատման, 2016թ. իրականացված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակային և հակազդման վերլուծությունը, համաճարակաբանական հետազոտությունների և գնահատման զեկույցները:
49. Ծրագիրը մշակվել է հաշվի առնելով միջազգային առաջավոր փորձը, ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների առաջարկությունները, ռազմավարությունները, միջազգային պարտավորությունները, որոնց միացել է ՀՀ-ն:
50. Ծրագրի ռազմավարությունները համահունչ են ազգային և միջազգային ծրագրերին և հոչակագրերին, որոնց թվում են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2015թ. սեպտեմբերին կայացած հատուկ նիստի ժամանակ ընդունված մինչև 2030թ. կայուն զարգացման ծրագիրը, 2016թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով բարձր մակարդակի հանդիպման ժամանակ ընդունված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում քաղաքական հոչակագիրը,

ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի 2016-2021թթ. ռազմավարական ծրագիրը, ԱՀԿ-ի ՄԻԱՎ վարակի դեմ առողջապահական ոլորտի 2016-2021թթ. ռազմավարությունը և եվրոպական տարածաշրջանում ՄԻԱՎ վարակի դեմ առողջապահական ոլորտի պայքարի գործողությունների պլանը, առողջապահության ոլորտում ԱՊՀ երկրների համագործակցության խորհրդի կողմից 2014թ. ընդունված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ոլորտում պարտավորությունների հռչակագիրը, նաև ՀՀ-ում Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարությունը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագիրը, Տուբերկուլոզի կառավարման 2016-2020 թվականների ազգային ռազմավարությունը, Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարությունը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագիրը, ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը:

**III. 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ  
ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

51. Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի հիմնական նպատակը 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին արդյունավետ հակազդման ապահովումն ու մինչև 2030թ. ՁԻԱՀ-ի համաճարակի վերացմանը հասնելու համար նախադրյալների ստեղծումն է:



**IV. 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ  
ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

52. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի խնդիրներն են՝
- 1) նվազեցնել ՄԻԱՎ վարակի նոր դեպքերը,
  - 2) պահպանել մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցումը վերացրած երկրի կարգավիճակը,
  - 3) հասնել «90-90-90» թիրախներին,
  - 4) նվազեցնել ՄԻԱՎ վարակով պայմանավորված մահացությունը,
  - 5) նվազեցնել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանձուխտրականությունը:

**Վ. 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

53. Ծրագրի հիմնական ուղղություններն են՝
- 1) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում,
  - 2) Բուժում, խնամք և աջակցություն,
  - 3) Մոնիտորինգ և գնահատում:

## VI. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

54. Նպատակը՝ ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի նվազեցում, մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցումը վերացրած երկրի կարգավիճակի պահպանում, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 90%-ի կողմից իրենց կարգավիճակի իմացության ապահովում:
- 1) **Ռազմավարություն 1.** ՄԻԱՎ վարակի փոխանցման նվազեցում առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում:
  - 2) **Միջոցառումներ.**
    - ա. ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի իրականացում:
    - բ. ԹՆՕ-ներին փոխարինող բուժման տրամադրում:
    - գ. ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում:
    - դ. SUS-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում:
    - ե. Աշխատանքային միգրանտների, նրանց ընտանիքի անդամների, պոտենցիալ միգրանտների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում՝ առողջապահական ծառայությունների համապարփակ փաթեթի տրամադրմամբ:
    - զ. Հյուրընկալող երկրների հետ համագործակցության զարգացում՝ միգրանտներին (օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիներ) ՄԻԱՎ վարակի կանխարգելման հարցերով խորհրդատվություն տրամադրելու և ՄԻԱՎ-ի վերաբերյալ անանուն հետազոտություն անցնելու, անհրաժեշտության դեպքում ՀՌՎ բուժման հասանելիության և դրա անընդհատության ապահովման համար:
    - է. ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումների իրականացում՝ ՀՀ-ում բնակվող օտարերկրյա քաղաքացիների շրջանում:
    - ը. ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի իրականացում:
    - թ. Երիտասարդների շրջանում իրազեկման և ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումների իրականացում:

ժ. Դպրոցներում «Առողջ ապրելակերպ» դասընթացի դասավանդում:

ժա. Առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնողների համար սեմինար-վարժանքների անցկացում:

ժբ. Նախակոնտակտային կանխարգելման տրամադրում:

ժգ. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի և խտրականության նվազեցման նպատակով զանգվածային լրատվամիջոցներով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի լուսաբանում, բնակչության իրազեկության մակարդակի բարձրացում:

3) **Ակնկալվող արդյունքներ.**

ա. 75%-ով կնվազի ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի թիվը:

բ. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 90%-ը կհմանա իր կարգավիճակի մասին:

4) **Ռազմավարություն 2.** ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում բժշկական կազմակերպություններում

5) **Միջոցառումներ.**

ա. ՄԻԱՎ-ի վերաբերյալ դոնորական արյան սկրինինգ:

6) **Ակնկալվող արդյունքներ.**

ա. Չի արձանագրվի դոնորական արյան միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման որևէ դեպք:

բ. Չի արձանագրվի ՄԻԱՎ-ով նոզոքոմիալ վարակման որևէ դեպք բժշկական կազմակերպություններում:

գ. Հետկոնտակտային կանխարգելում ստացածների շրջանում չի արձանագրվի ՄԻԱՎ վարակի որևէ դեպք:

7) **Ռազմավարություն 3.** ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ծառայությունների ընդլայնում:

8) **Միջոցառումներ.**

ա. Բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության հետազա ընդլայնում:

բ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրում, համաճարակաբանական հետազոտություն:

- գ. Ռեֆերենսային մեթոդով ՄԻԱՎ-ի հայտնաբերում, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն, ՄԻԱՎ վարակի վերջնական ախտորոշում, համաճարակաբանական հետազոտություն:
- դ. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիաների միջև համակարգչային ցանցի ստեղծում:
- ե. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող լաբորատորիաներում որակի արտաքին և ներքին հսկողության իրականացում:
- զ. Բժշկական կազմակերպություններին ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, ՄԻԱՎ վարակի ախտորոշման, կանխարգելման գործնական հարցերով մեթոդական և գործնական օգնության, տեխնիկական աջակցության տրամադրում:
- է. ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների շրջանում ՀԿ-ների ուղղորդմամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրման ընդլայնում:
- ը. Բնակչության շրջանում, ներառյալ առավել վտանգի ենթարկվող խմբերը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության խթանման ու մասսայականացման նպատակով ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններով ուղեկցվող հանրային միջոցառումների իրականացում:
- թ. Մշակել արագ թեստավորման լիցենզավորման պահանջներ և սահմանված կարգով ներկայացնել հաստատման ՀՀ կառավարություն:

9) **Ակնկալվող արդյունքներ.**

- ա. Կընդլայնվի ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրումը, ինչպես բուժաշխատողների, այնպես էլ այլ ծառայություններ տրամադրողների (ՀԿ-ներ) կողմից:
- բ. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող բոլոր լաբորատորիաներում կներդրվի ներքին հսկողության ընթացակարգ, և կիրականացվի որակի արտաքին հսկողություն:

10) **Ռազմավարություն 4.** Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում:

11) **Միջոցառումներ.**

- ա. Բոլոր հղի կանանց ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրում:
- բ. ՄԻԱՎ վարակ ունեցող հղիներին և նրանցից ծնված նորածիններին ՀՌՎ կանխարգելիչ բուժման տրամադրում:
- գ. Հղիների շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն իրականացնող բժշկական կազմակերպություններին անհրաժեշտ քանակի թեստ-հավաքածուներով ապահովում:
- դ. Ըստ անհրաժեշտության նորածիններին արհեստական կաթնախառնուրդներով ապահովում:
- ե. Հղիների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ երկրորդ հետազոտության իրականացում:
- զ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտի օրենսդրական դաշտի ուսումնասիրություն և բարելավում՝ ըստ անհրաժեշտության:

12) **Ակնկալվող արդյունքներ.**

- ա. Կապահպանվի մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցումը վերացրած երկրի կարգավիճակը:
- բ. 100000 կենդանի ծնունդների հաշվով մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման նոր դեպքերի գործակիցը կլինի  $\leq 50$ :
- գ. Կրճքով կերակրող ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման ցուցանիշը կլինի  $< 5\%$ :
- դ. Կրճքով չկերակրող ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման ցուցանիշը կլինի  $< 2\%$ :

## VII. ԲՈՒԺՈՒՄ, ԽՆԱՄՔ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

55. Նպատակը՝ բուժման հասանելիության ընդլայնում և ՄԻԱՎ վարակով պայմանավորված մահացության նվազեցում:
- 1) **Ռազմավարություն 1.** ՄԻԱՎ վարակով պացիենտներին ՀՌՎ բուժման հասանելիության ապահովում:
  - 2) **Միջոցառումներ.**
    - ա. ՄԻԱՎ վարակով պացիենտների դիսպանսերային հսկողության իրականացում:
    - բ. ՄԻԱՎ վարակով պացիենտների զուգընկերների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության անցկացում:
    - գ. ՄԻԱՎ վարակով պացիենտների դիսպանսերային հսկողության համակարգի բարելավում:
    - դ. Հետևողականության կանխարգելման տրամադրում ՄԻԱՎ-ով մասնագիտական և ոչ մասնագիտական վարակման վտանգի ենթարկվածներին, ներառյալ դիսկորդանտ զույգերին:
    - ե. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման, ՄԻԱՎ վարակով պացիենտների բուժման և վարման, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության (հետազոտությունների) ուղեցույցների պարբերաբար վերանայում ԱՀԿ-ի ուղեցույցներին դրանք համահունչ դարձնելու նպատակով:
    - զ. ՀՌՎ բուժման տրամադրում ՄԻԱՎ վարակ ունեցող պացիենտներին, բուժման կլինիկական և լաբորատոր մոնիտորինգի իրականացում:
    - է. Բժշկական կազմակերպություններին ՄԻԱՎ վարակով պացիենտների վարման գործնական հարցերով մեթոդական և գործնական օգնության, տեխնիկական աջակցության տրամադրում:
    - ը. Օպորտունիստական վարակների ախտորոշման, բուժման և կանխարգելման տրամադրում:
    - թ. ՄԻԱՎ վարակով պացիենտներին խնամքի և աջակցության տրամադրում:
    - ժ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիվանդանոցային բուժման տրամադրում:
    - ժա. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով (ներառյալ ՄԻԱՎ-ով ապրողների նկատմամբ խարանճ ու խտրականությունը) բուժաշխատողների շարունակական ուսուցում և կատարելագործում:

3) **Ակնկալվող արդյունքներ.**

- ա. ՄԻԱՎ վարակ ունեցողների 90%-ին կտրամադրվի ՀՌՎ բուժում:
- բ. ՀՌՎ բուժում ստացողների 90%-ի շրջանում կարճաժամկետի վիրուսային ծանրաբեռնվածության չհայտնաբերվող մակարդակ:
- գ. Կնվազեն ՄԻԱՎ վարակով պայմանավորված մահվան տարեկան դեպքերը:
- դ. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում տուբերկուլոզից մահացությունը կնվազի 75%-ով:
- ե. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում հեպատիտներ Բ-ից և Ց-ից մահացությունը կնվազի 10%-ով:
- զ. Կնվազի ՄԻԱՎ-ով ապրողների նկատմամբ խարանճ ու խտրականությունը:



## VIII. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

56. Նպատակը՝ ռազմավարական նշանակության համապատասխան տեղեկությունների հավաքագրում՝ իրավիճակին համարժեք գործողություններ պլանավորելու և իրականացնելու համար:
- 1) **Ռազմավարություն 1.** Համաճարակաբանական հսկողության (հետազոտությունների) արդյունավետ համակարգի գործունեության ապահովում:
  - 2) **Միջոցառումներ.**
    - ա. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրով սահմանված միջոցառումների մոնիտորինգ և գնահատում:
    - բ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ տվյալների համապարփակ էլեկտրոնային բազայի ստեղծում և վարում:
    - գ. ՄԻԱՎ վարակի նկատմամբ ընթացիկ, կենսաբանական և վարքագծային համաճարակաբանական հսկողության (հետազոտությունների) իրականացում:
    - դ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների բուժման երկարատև մոնիտորինգի համակարգի գործունեության ապահովում դեղակայունության զարգացումը գնահատելու և կանխելու նպատակով:
    - ե. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող գործնական հետազոտությունների իրականացում:
    - զ. Դրամաշնորհային ծրագրային առաջարկների մշակում և ներկայացում Գլոբալ հիմնադրամին և այլ դոնորներին/կազմակերպություններին:
    - է. Դրամաշնորհային ծրագրերից պետական ֆինանսավորման աստիճանական անցման պատրաստվածության (կայունության) պլանի մշակում
    - ը. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի շարունակականության, տրամադրվող ծառայությունների անընդհատության ապահովման համար ՀՀ-ում 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի մշակում:

3) **Ակնկալվող արդյունքներ.**

- ա. Կապահովվի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվության ժամանակին հավաքագրումը, վերլուծությունը, անհրաժեշտ ցուցանիշների հաշվարկումը՝ իրավիճակին համարժեք գործողություններ պլանավորելու և իրականացնելու համար:
- բ. Կիրականացվի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի մոնիտորինգ և գնահատում:
- գ. Կիրականացվեն ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ընթացիկ համաճարակաբանական հսկողություն (հետազոտություններ), կենսաբանական և վարքագծային հետազոտություններ:
- դ. Ժամանակին կպատրաստվեն և կներկայացվեն ՀՀ ստանդանաձ միջազգային պարտավորությունների վերաբերյալ զեկույցներ:

ՀՀ կառավարության  
2017 թ. հունիսի 15-ի նիստի  
N 25 արձանագրային որոշման

**ՑԱՆԿ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՄԻԱՎ./ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

| Առաջնահերթ միջոցառումներ   | Պատասխանատու/համակատարող   | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը                                     | Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը (հազ. դրամ)                        | Վերստուգելի չափանիշը  | Ակնկալվող վերջնական արդյունքը                                |
|--|--|------------------|--|--|---|--|
| <b>I. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ</b>   |  |                  |  |  |   |  |
| <b>1) Ռազմավարություն 1.</b> ՄԻԱՎ վարակի փոխանցման նվազեցում առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում |  |                  |  |  |   |  |
| ա. ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի իրականացում                 | ՀՀ առողջապահության նախարարություն  | 2017 -2021       | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ                 | 1,223,328.7  | ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում <2%                         | ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի թվի նվազում        |
| բ. ԹՆՕ-ներին փոխարինող բուժման տրամադրում  | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | 2017 -2021       | Պետական բյուջե, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | 1,107,143.6, որից պետական բյուջե՝ 470,000.0, այլ աղբյուրներ՝ 637,143.6 | Ծրագրի ավարտին փոխարինող բուժման ծրագրում ընդգրկված ԹՆՕ-ների թիվը 800 | Փոխարինող բուժման ծրագրում ընդգրկված ԹՆՕ-ների թվի ընդլայնում |

| Առաջնահերթ միջոցառումներ  | Պատասխանատու/համակատարող   | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը                     | Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը (հազ. դրամ) | Վերստուգելի չափանիշը  | Ակնկալվող վերջնական արդյունքը   |
|---|--|------------------|--|---|---|---|
| գ. ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում  | ՀՀ առողջապահության նախարարություն  | 2017 -2021       | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | 645,485.4                                       | ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԿՍԿ-ների շրջանում <2%   | ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի թվի նվազում   |
| դ. SUS-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում  | ՀՀ առողջապահության նախարարություն  | 2017 -2021       | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | 1,352,103.1                                     | ՄԻԱՎ-ի տարածվածությունը SUS-ների շրջանում <2%   | SUS-ների շրջանում ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի թվի նվազում   |
| ե. Աշխատանքային միգրանտների, նրանց ընտանիքի անդամների, պոտենցիալ միգրանտների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում՝ առողջապահական ծառայությունների համապարփակ փաթեթի տրամադրմամբ                     | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2017 -2021       | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | 1,987,500.0                                     | ՄԻԱՎ-ի տարածվածությունը աշխատանքային միգրանտների շրջանում <2%                                     | Աշխատանքային և միգրանտների շրջանում ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի թվի նվազում   |
| զ. Հյուրընկալող երկրների հետ համագործակցության զարգացում՝ միգրանտներին (օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիներ) ՄԻԱՎ վարակի կանխարգելման հարցերով խորհրդատվություն տրամադրելու և ՄԻԱՎ-ի վերաբերյալ անանում | ՀՀ առողջապահության նախարարություն  | 2018 -2021       | -  | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում            | ՄԻԱՎ վարակի կանխարգելման և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և ՀՌՎ բուժման հասանելիության ապահովում | Հյուրընկալող երկրներում միգրանտներին ՄԻԱՎ վարակի կանխարգելման հարցերով խորհրդատվություն տրամադրելու և ՄԻԱՎ-ի վերաբերյալ անանում հետազոտության անցնելու հնարավոր |

| Առաջնահերթ միջոցառումներ   | Պատասխանատու/համակատարող  | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը                     | Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը (հազ. դրամ) | Վերստուգելի չափանիշը   | Ակնկալվող վերջնական արդյունքը   |
|--|---|------------------|--|---|--|---|
| հետազոտություն անցնելու, անհրաժեշտության դեպքում ՀՌՎ բուժման հասանելիության և դրա անընդհատության ապահովման համար |   |                  |  |   |  | րության ստեղծում, ՀՌՎ բուժման հասանելիության և դրա անընդհատության ապահովման համար մեխանիզմների ներդրում                           |
